



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Գործնականի դասերի իրականացումը առարկան
դասավանդելիս»

Առարկան՝ Տեխնոլոգիա

Հետազոտող ուսուցիչ՝ Սրբուհի Սահակյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Նորաշենի Ավ.Իսահակյանի անվան մ/հ

Բովանդակություն

1.	Ներածություն	3
2.	Գործնական աշխատանքների դերն ու նշանակությունը տեխնոլոգիայի դասավանդման ընթացքում	6
3.	Որքանով է արդյունավետ գործնական աշխատանքների կազմակերպումը տեխնոլոգիա առարկայի խոհանոց բաժնում	11
4.	Հետազոտության դասի պլան	13
5.	Եզրակացություն	17
6.	Օգտագործված գրականության ցանկ	18

Ներածություն

Երիտասարդների պատշաճ կրթությունը նրանց գլուխը բառերից, նախադասություններից և տարբեր հեղինակներից քաղված մտքերից բաղկացած զանգվածով լցնելը չէ, այլ նրանց հասկացողությունը արտաքին աշխարհին բացելը, այնպես, որ գործող ալիքը կարողանա ծնվել իրենց իսկ մտքերից, ինչպես տերևները, ծաղիկները և մրգերն են ընծյուղվում ծառի վրայի բողբոջից:

Յան Ամուս Կոմենսկի

Գործնական աշխատանքը աշակերտի ինքնուրույն գործունեության տեսակ է, որը հնարավորություն է տալիս զարգացնել ինքնուրույն ճանաչողական մտածողություն: Կրթության գլխավոր նպատակը ոչ միայն գիտելիքներ տալն է, այլ նաև դրանք կիրառել կարողանալը: Աշակերտը գործնական աշխատանքների ժամանակ պետք է ընտրության հնարավորություն ունենա, կարողանա ինքնուրույն առաջադրանքները կատարի, որը խթանում է աշակերտի ստեղծագործական մտածողության հմտությունը, երևակայությանը, իմացական հետաքրքրությունը:

Խմբային գործնական աշխատանքը ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը նպաստելով սովորի համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Խմբային գործնական աշխատանքները աշակերտների մոտ զարգացնում են կարևոր մարդկային հատկանիշներ՝ համագործակցել, լսել և հարգել դիմացինի կարծիքը: Նման գործնական դասերին նույնիսկ ամենաթույլ աշակերտը թեկուզ փոքր, բայց որոշակի ներդրում կունենա տրված առաջադրանքը կատարելու համար: Գործնական դասերը աշակերտների մոտ կզարգացնեն տեսական գիտելիքների կիրառումը գործնականում, և կկատարելագործեն սովորողների գործնականում աշխատելու կարողություններն ու հմտությունները՝ խթանելով աշակերտների ստեղծագործական գործունեությանը, կբարձրացնեն ուսուցման և ուսումնառության որակը:

Ինչպես հայտնի է, հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի զարգացումն է, այլ խոսքով՝ հանրակրթությունը ապահովում է սովորողներին անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Կրթական բարեփոխումներով պայմանավորված՝ ավելի բարձր պահանջներ են առաջադրում սովորողների մտավոր, հոգևոր և կյանքի համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների տիրապետման նկատմամբ, ինչպես նաև կարողունակ ուսուցիչներ ունենալու առումով: Այս համատեքստում ուսուցիչը պետք է լինի նախաձեռնող, նորարար, որպեսզի կարողանա ապահովել սովորողների մոտ գիտալիքաստեղծ գործողությունների բնականոն առաջընթացն ու նրաց մոտ ձևավորի պահանջվող կարողունակությունները: Այս ընթացքում, սակայն, ուսուցիչը կարող է բախվել մի շարք խնդիրների, ուստի ուսումնական առարկայի համար սահմանված կրթական չափորոշչային վերջնարդյունքին հասնելու համար անհրաժեշտ է, որ նա անպայման համապատասխանի նոր մարտահրավերներով պայմանավորված պահանջներին՝ լինի ստեղծագործ, նորարար, ունենա մարդասիրական մղումներ, մասնագիտական ու մարդկային բարձր որակներ: Ցանկացած ուսուցիչ պետք է հասկանա, որ իր անմիջական ներգործությունն ու

ուղղորդումը առանցքային նշանակություն ունեն դպրոցականների բնականոն զարգացման, արժեհամակարգի ձևավորման ու ուսումնառության ընթացքում առաջադիմություն ունենալու և գործնական կարողությունների զարգացման առումով: Արդյունքը կլինի այն, որ կունենանք ինքնուրույն մտածող ու գործող, կրթության և կյանքի այլ ոլորտներում նախաձեռնող, կյանքի իրողություններին ստեղծագործաբար մոտեցող սերունդ: Այստեղ առանցքային ենք համարում գործնական հմտությունների զարգացումը՝ մասնավորապես տեխնոլոգիայի դասավանդման ընթացքում:

Կարծում ենք, որ գործնական աշխատանքների իրականացումը մեծապես կարող է լուծել կրթական համակարգի մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում՝ սովորողներին սիրել տալ ուսումնական առարկան, ապահովել վերջիններիս ակտիվությունը դասին և զարգացնել նրանց մոտ ինքնուրույնություն և գործնական կարողություններ:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, որոնց մեջ կարևորվում է սովորողների ինքնուրույնությունն ու գործնական կարողությունները:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել ուսուցչի կողմից կիրառվող մանկավարժամեթոդական հնարները, մասնագիտական որակները, որոնք կարող են նպաստել միջին դպրոցում տեխնոլոգիայի դասաժամին գործնական աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Հետազոտության խնդիրը: Ուսումնասիրել տեխնոլոգիայի դասին գործնական աշխատանքների կազմակերպման եղանակները: Բացահայտել դասավանդման գործընթացում գործնական աշխատանքների արդյունավետությունը սովորողների ինքնուրույնության զարգացման վրա: Իրականացնել փորձարարական դասեր աշակերտակենտրոն և ավանդական եղանակներով, մշակել տվյալները:

Գործնական աշխատանքների դերն ու նշանակությունը տեխնոլոգիայի դասավանդման ընթացքում

Գործնական աշխատանքների դերին ու նշանակությանը՝ փաստենք, որ այն իրենից ենթադրում է տեսականորեն ապացուցված փաստերի, հարաբերակցությունների, առանձին կոնկրետ դեպքերի ստուգում, գործնականում տեսական գիտելիքների կիրառում, գործնական խնդիրների լուծումը և այլն, որն անչափ կարևոր է միջին դպրոցի սովորողների համար՝ հաշվի առնելով վերջիններիս տարիքային առանձնահատկությունները:

Գործնական աշխատանքի իրականացում ասելով՝ պետք է հասկանալ սովորողների կողմից կատարվող այն աշխատանքների տեսակները, որոնք վերաբերում են վերջինիս կողմից ձեռք բերված գիտելիքների ու հմտությունների գործնական կիրառությանը:

Առարկայական գիտելիքները առօրյա կյանքում, զանազան գործողությունների ընթացքում շրջանցելն անհնար է: Հենց այս հանգամանքով է պայմանավորված սովորողների մեջ ձևավորել ու զարգացնել այնպիսի հմտություններ ու կարողություններ, որոնք թույլ կտան տեխնոլոգիան գտնել կյանքում և կիրառել այն գործնականում: Այն կարող է նպաստել՝

- դիտարկելու, կռահելու, եզրակացություններ անելու կարողությունների ձևավորումը,
- Որոշումներ կայացնելու, սեփական և ուրիշների դատողություններին քննադատաբար վերաբերվելու, խմբում աշխատելու կարողությունների ձևավորումը,
- ուշադրության, հիշողության, աշխատասիրության, հանդուրժողականության, նպատակասլացության, համբերության զարգացումը,
- սեփական ուժերի նկատմամբ վստահության սերմանումը,
- ինքնուրույն աշխատելու, համաձայնության գալու մշակույթի ձևավորումը:

Տեխնոլոգիայի դասավանդման ընթացքում ուսուցչի գերխնդիրն է սովորողների համար տեսանելի դարձնել առարկայի կապն իրական կյանքի հետ: Այս առումով, կարծում ենք, շատ կարևոր է ուսումնական մասի գործնական հատվածը:

Առանց գործնական հմտությունների ձևավորման, տեխնոլոգիան գիտելիքների հաղորդումն ինքնանպատակ կարելի է համարել, քանի որ գիտելիքը յուրացնելն ու դա գործնականում կիրառելը փոխկապակցված գործընթացներ են, որոնք փոխլրացնում են միմյանց:

Ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ որոշել տեխնոլոգիայի ուսուցման դերը աշակերտների բազմակողմանի զարգացման, դաստիարակման և հետագայում մաթեմատիկայից կայուն գիտելիքների տիրապետման գործում:

Տեխնոլոգիայի դասերին սովորողների կատարած գործնական աշխատանքն առաջին հերթին նրանց ինքնուրույն մտածողության դրսևորումն է, որն ավելի արդյունավետ է աշակերտակենտրոն ուսուցման շրջանակներում: Միջին դպրոցում տեխնոլոգիայի դասաժամին գործնական աշխատանքների հիմնական խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սովորողների սոցիալական հմտությունները,
- մատուցել գործնականում կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- սովորողների համար ստեղծել բարենպաստ կրթական միջավայր ինքնուրույն գործելու և նախաձեռնողի դերում հանդես գալու համար,
- խրախուսել սովորողների քննադատական մտածողությունը
- սովորողին ցույց տալ առարկան տարբեր տեսանկյուններից օգտագործել միջառարկայական կապեր՝ մաթեմատիկական գիտելիքները ամբողջացնելու և զանազան ձևերով կիրառելու համար:

Որպես կրթության բարձրագույն նպատակ՝ կարելի է դիտարկել ինքնազարգացող անհատականության ձևավորումը: Սա նաև հանրակրթության նկատմամբ պետության տեսակետն է: Հանրակրթության նպատակների և պետական քաղաքականության սկզբունքների բաղադրամաս է նաև՝

«Ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռք բերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը»:

Երեխայի ընկալումների առումով հետաքրքիր միտք է արտահայտում խորհրդային հոգեբան Սեմյոնովիչ Վիգոտսկին. «Ուսուցման գործընթացների ժամանակային հարաբերակցության և դրանց հոգեբանական հիմքերի զարգացման

հարցի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զարգացումը միշտ առաջ է ընթանում ուսուցումից: Երեխան ավելի վաղ է տիրապետում որոշակի հմտությունների, քան գիտակցաբար և կամավոր կերպով սովորում է դրանք կիրառել: Զարգացումը տեղի է ունենում այլ տեմպերով, և ունի իր ներքին տրամաբանությունը»:

Սովորողի համար բարենպաստ կրթական միջավայր կարող է ապահովել փոխգործուն մեթոդների կիրառությունը, որը թույլ է տալիս սովորողներին անընդհատ լինեն համագործակցության մեջ, երկխոսել, քննարկել ուսուցանվող նյութը, միասին գտնել հարցերի պատասխաններն ու գործնական կիրառության մեջ դնել իրենց տեսական գիտելիքները: Այս մեթոդներն ինտերակտիվ ուսուցման բաղադրիչներն են, որտեղ սովորողները հնարավորություն ունեն ոչ միայն համագործակցել ուսուցչի, այլև միմյանց հետ, ինչը մեծ նշանակություն ունի սովորողների անձի ձևավորման, կոլեկտիվ մտածողության, ստեղծագործականության զարգացման համար:

Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է շարժուն ու համագործակցային դասերի իրականացում, որտեղ սովորողը չի սպասում, որ ուսուցիչն իրեն դաս բացատրի: Այս պարագայում նույնիսկ նոր նյութի հաղորդման ժամանակ ակնկալվում է սովորողի ուղիղ մասնակցությունը: Սովորողներն ու ուսուցիչը համագործակցում են, որևէ փոխգործուն խաղային մեթոդով, սովորում նոր դասի կարևոր հասկացությունները:

Փոխգործուն մեթոդները նպաստում են սովորողների մտածողության զարգացմանը, սեփական կարծիք հայտնելուն, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են, որոնց նպատակն է համատեղ որոնումներ կատարել, ընդհանուր նպատակի համար որոշումներ կայացնել ու իրագործել:

Փոխգործուն մեթոդների օգնությամբ մեծ հետաքրքրություն է առաջացնում միջին դպրոցի սովորողների շրջանում: Նրանց միջև ձևավորվում է առողջ մրցակցություն, իրար օգնելու, սովորեցնելու ցանկություն, որն էլ իր հերթին կարող է դրական ազդեցություն ունենալ վերջիններիս առաջադիմության վրա: Փոխներգործուն տեխնոլոգիաները և մեթոդները բազմազան են՝ աշխատանք փոքր խմբերում՝ զույգերով, փոխատեղվող եռյակներով, կարուսելի, էվրիստիկական զրույցի, դաս-սեմինարների (մտքերի փոխանակություն, բանավեճ), գործարար խաղերի, համագործակցային, մոդելավորման տեխնոլոգիաների կամ նախագծերի մեթոդ և այլն: Այսպես ուսուցիչն սովորողներինն հնարավորություն է տալիս

համագործակցել միմյանց հետ, ուղղել ու փոխարացնել միմյանց, սովորել ու սովորեցնել իրար:

Ղասավանդման գործընթացում առանցքային նշանակություն ունի նաև հարցադրումների կիրառությունը: Հարցերի ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը, ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը, ձևավորել ու զարգացնել գործնական կարողությունները առարկայի ղասավանդման շրջանակներում: Հարցադրումների կիրառությունը թույլ կտա ուսուցչին ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը: Այստեղ կարելի է համոզմունք հայտնել այն հարցի շուրջ, որ սովորողի ներգրավվածությունը դասին մեծապես ապահովում է ուսուցման դրական որակի առաջընթացը: Ավելին՝ ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են սովորողների ինքնավստահությունը: Գործնական աշխատանքների ժամանակ այդ թվում նաև հարցադրումների մեթոդի կիրառումը ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից: Որպեսզի գործընթացն արդյունավետ լինի, ուսուցչի կողմից նախօրոք մշակված հարցադրումները պետք է լինեն.

- o հստակ,
- o նպատակաուղղված,
- o հակիրճ,
- o վերջնարդյունքին համապատասխան,
- o ունենան տրամաբանական հաջորդականություն,
- o մտածելու տեղիք տան,
- o ստեղծեն հետադարձ կապ:

Մանկավարժության մեջ սովորողին տրվող հարցերը բաժանվում են մի քանի տեսակի, դրանք են.

1. Բաց
2. Փակ
3. Հուշող

4. Ենթատեքստով
5. Հետադարձ
6. Ուղղորդող

Չափից շատ հարցերի օգտագործումը կարող է հանգեցնել բացասական արդյունքների և աշակերտների պասիվության: Դա կարող է հանգեցնել աշակերտներին չմասնակցելու քննարկումներին, այն կարող է առաջացնել վախի և հարցաքննության զգացողություն: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեությանձև: Սովորաբար, եթե ուսուցիչը նպատակ է դրել հարցադրումների մեթոդի օգնությամբ զարգացնել սովորողների ստեղծագործականությունը, գործնական կարողությունները, ապա հարցը պիտի ձևակերպվի հետոց այդ ենթատեքստի շրջանակներում: Օրինակ՝ Կարծու՞մ ես այդպես ճիշտ է, կամ ինչպե՞ս կվարվես, եթե...: Սովորողն այսպես դուրս է գալիս գիտականության կաղապարից և հնարավորություն ունենում անկաշկանդ երևակայել, հորինել, աշխատել ստեղծագործաբար: Գործնական աշխատանքների ժամանակ ուսուցչի կողմից տրվող հարցադրումները պետք է լինեն ոչ թե ստուգող, այլ ուղղորդող, քանի որ սովորողն այս ընթացքում պետք է հնարավորինս հանգիստ ու անկաշկանդ լինի, որպեսզի կարողանա իր գիտելիքը կիրառել գործնականում:

Որքանով է արդյունավետ գործնական աշխատանքների կազմակերպումը տեխնոլոգիա առարկայի խոհանոց բաժնում

Խոհարարություն թեմայի նպատակն է.

Սովորողներին ներկայացնել խոհարարության և սննդի նշանակությունը մարդու կյանքում, դրանց ներկայացվող պահանջները:

Թեմայի խնդիրներն են.

Սովորողները պետք է՝

ճանաչեն և գործածեն խոհանոցում օգտագործվող սպասքը, սարքավորումները և գործիքները, կարողանան սպասքադրել նախաճաշի, ճաշի, ընթրիքի համար նախատեսված սեղանները, ծանոթանան՝

1. ուտեստների մատուցման կանոններին,
2. խոհանոցի սանիտարահիգիենիկ և անվտանգության կանոններին,

կարողանան կատարել բանջարեղենների նախնական մշակում, մշակաբույսերից պատրաստել կերակրատեսակներ:

Գործնական դասեր պլանավորելիս պետք է հաշվի առնել աշակերտների նախնական գիտելիքները և տեսական գիտելիքները պետք է ամրապնդել օգտվելով հետևյալ հարցերից՝

Թեման սկսել՝ նշելով և կարևորելով մարդու կյանքում սննդի նշանակության մասին գրույցով: Գծակարգի միջոցով կարելի է ներկայացնել սննդամթերքների դասակարգումը (բուրգի տեսքով):

Նշել օրգանիզմի համար անհրաժեշտ վիտամիններով հագեցած սննդամթերքների տեսակները: Կարելի է առաջարկել Վենի դիագրամի միջոցով ներկայացնել տարբեր վիտամիններ պարունակող սննդամթերքները:

Ձեռք բերված խոհանոցային գործիքների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքները, դրանց կիրառման ձևերին ազատ տիրապետելը հնարավորություն կտան սիրով և հաճույքով կատարել խոհանոցային գործերը:

Իսկ անվտանգության կանոնների և խոհանոցային գործիքներին և սարքավորումներին ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջների խստիվ պահպանումն աշխատանքը կդարձնի առավել անվտանգ:

Պահածոների վերաբերյալ ճիշտ պատկերացումներ ունենալը հնարավորություն կստեղծի կանխելու սննդային թունավորումները:

Սովորողները կժանոթանան խոհարարի մասնագիտությանը և կիմանան վարպետային ուսուցում կազմակերպող մասնագիտական ուսուճական հաստատությունների մասին:

Թեմաների վերաբերյալ գործնական աշխատանքները հնարավորություն են տալիս սովորողներին ամրապնդելու տեսական գիտելիքները:

Գործնական դասերը խոհանոց բաժնում սիրված են աշակերտների կողմից բարձր է սովորողների կողմից ակտիվությունը խմբում աշխատանքը ոգևորում է նրանց: Աշխատանքի ընթացքում տեսական գիտելիքները գործնականում կիրառելիս աշակերտների մոտ զարգանում է աշխատանքային կարողություններ և հմտություններ, նպաստում է ինքնուրույնության բարձրացմանը, շուտ կողմնորոշվելու ունակությանը, դաստիարակում է սեր աշխատանքի նկատմամբ, առաջացնում է հետաքրքրություն խոհանոցում օգտագործվող մթերքների, կերակրատեսակների, ազգային և այլ խոհանոցների նկատմամբ: Իրենց աշխատանքի վերջնարդյունքը սովորողները ներկայացնում են առանձնակի ոգևորությամբ և պատրաստ են լսել կարծիքներ իրենց աշխատանքի մասին: Օբյեկտիվորեն գնահատում են իրենց և իրենց ընկերների կատարած աշխատանքը:

Հետազոտության դասի պլան

Դասարան՝ 6

Դասի թեման՝ Բանջարեղենից կերակրատեսակների պատրաստելու տեխնոլոգիան Դասի նպատակը՝

1.Սովորողներին ներկայացնել բանջարեղենի նշանակություն մարդու կյանքում

2.Ծանոթացնել խոհանոցի սանիտարահիգիենիկ կանոններին

3.Ճանաչել բանջարեղենի տեսակները

4.Կարողանալ պատրաստել աղցան և համեմել 5.Զարգացնել աշղատանքային հմտություններ և Համագործակցային կարողություններ

Դասի տեսակը՝ գործնական

Դասի վերջնարդյունքը՝ բանջարեղենային աղցան Դասի ընթացք

<<Մտազրոհ>> մեթոդի կիրառմամբ պարզել առկա գիտելիքների մակարդակը բանջարեղենի մասին

- 1.Ներկայացնել սննդամթերքների դասակարգումը /բուրգի տեսքով/
- 2.Բանջարեղենի տեսակները
- 3.Բանջարեղենի մշակման ձևերը /նախնական և ջերմային/
- 4.Բանջարեղենից կերակրատեսակներ պատրաստելու տեխնոլոգիան

Աշակերտներին բաժանել խմբերի: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է աղցանի բաղադրատոմսը և իր կողմից մշակվող բանջարեղենի օգտակար հատկությունները: Խմբերին տրվում է ժամանակ աշխատելու համար:

Խմբերի աշխատանքները հիմնականում հենվում են սովորողների համագործակցության, փոխօգնության վրա:

Համատեղ աշխատանքի արդյունքում պատրաստում , ձևավորում և մատուցում են աղցան: Համտեսում են աղցանը և գնահատում իրենց կատարած աշխատանք:

<<Քառաբաժան>> մեթոդի միջոցով պարզել սովորողների զգացողությունները, Ինչպես նաև նյութի ընկալման աստիճանը:

- 1.Ինչ գիտեին:
- 2.Ինչը նոր իմացան:
- 3.Ինչն էր, որ այդպես էլ անհասկանալի մնաց;
- 4.Ինչ զգացողություն ունեիք դասի սկզբում և դասի վերջում:

Եզրակացություն: Դասի ընթացքում աշակերտները աշխատեցին մեծ ոգևորությամբ ձևավորելով խմբում աշխատելու կարողություններ և հմտություններ:Գործնական դասին աշխատում են բոլորը յուրաքանչյուր կատարում էր աշխատանքի իր բաժին:Գործնականում կիրառելով տեսական գիտելիքները աշակերտերը կարևորեցին տեսական գիտելիքների իմացությունը:





Դասի պլան

Դասարան՝ V

Դասի թեմա՝ Անձեռոցիկների ծալադրում

Դասի թեմա՝ Ձեռնարկատիրական գործունեության իրականացում

Դասի նպատակը՝ 1. Անձեռոցիկների ծալադրման տեխնոլոգիայի ուսուցումը օրիգամի եղանակով

2. Ձևավորել ձեռնարկատիրական գործունեության գաղափարներ մտածելու և իրականացնելու կարողություն

Խնդիրները՝ 1. Ծանոթանալ անձեռոցիկների տեսակներին

2. Սովորեցնել ըստ տրված նմուշօրինակի քայլաբարձարի ծալել անձեռոցիկ

3. Ջարգացնել համագործակցության կարողություններ

4. Անձեռոցիկների ծալադրումը ծառայություն է

ձեռնարկատիրական

գործունեության ժամանակ

Անհրաժեշտ նյութեր՝ անձեռոցիկների նմուշօրինակներ, գունավոր անձեռոցիկներ, բարակ

ժապավեն

Դասի տեսակը՝ գործնական

Դասի ընթացքը

Խթանման փուլ՝ 5-7ր. Դիտել տեսանյութ և ներկայացնել ձևերը և տեսակները, սեղանի սպասքաղորման քայլաշարը: Պարզել սովորողների գիտելիքների առկա մակարդակը անձեռոցիկների տեսակների մասին: Աշակերտներին ուղղել հետևյալ հարցադրումները՝

1. Անձեռոցիկների ի՞նչ տեսակներ գիտեք:

2. Ի՞նչ է նշանակում <<Օրիգամի>> բառը:

3. Որտե՞ղ և ի՞նչ նպատակով են օգտագործում ծալադրված անձեռոցիկները՞

4. Ի՞նչ է ձեռնարկատիրական գործունեություն արդյունք

Իմաստի ընկալման փուլ՝ 25ր.-Աշակերտներին բաժանել խմբերի: Խմբերի աշխատանքները հիմնականում հիմնվում են սովորողների

համագործակցության, փոխօգնության, բազմաբնույթ մտածողության

վրա: Յուրաքանչյուր խումբ ստանում է անձեռոցիկների ծալադրման նմուշօրինակը

պատրաստման քայլաշարով: Խումբը քննարկում և փորձում է ըստ նշված

պայմանանշանների կատարել ծալադրման քայլաշարը:

Խմբի անդամները պատրաստում են իրենց օրինակները: Խմբից մեկը ներկայացնում է պատրաստման եղանակը, մյուսները լրացնում են եթե դրա կարիքը կա:

Կշռադատման փուլ` Խմբերի աշխատանքները ներկայացնելուց հետո քննարկում են աշխատանքի արդյունքները և գնահատվում: Նշում են, որ անձեռոցիկների ծալադրումը սեղանի սպասքադրման ժամանակ ծառայության մատուցում է և ձեռնարկատիրական գործունեության իրականացում:

Եզրակացություն

Աշակերտներին շատ դուր է գալիս, մասնակցել գործնական դասերին աշխատել խմբերում: Նրանք հաճույքով կատարում են աշխատանքի իրենց բաժինը, ակտիվ են, անընդհատ համեմատություններ են անցկացնում: Ինքնուրույն աշխատել նրանց ոգևորում է:

Զբաղված լինելով իրենց աշխատանքով նրանք դիտարկումներ են անում, օգնում ընկերներին, սովորում լավ աշխատող ընկերներից, հարցեր ուղղում ուսուցչին և հարցերի են պատասխանում: Աշխատանքի ժամանակ ուսուցչի խնդիրն է այնպիսի իրավիճակներ, որոնք աշակերտին ոչ միայն համապատասխան գիտելիքներ կփոխանցեն, այլ նրանց կմղեն փոխօգնության, աշխատանքի արդյունքը համատեղ դիտարկելուն ու քննարկելուն, ինչպես նաև գնահատելու իրենց կատարած աշխատանքը:

Այսպիսով, հետազոտության ուսումնասիրության արդյունքում կատարեցինք մի շարք եզրահանգումներ:

Տեխնոլոգիայի դասաժամերին գործնական առաջադրանքների արդյունավետ իրականացումը լուծում է մի շարք մանկավարժական խնդիրներ,

Նպաստում է սովորողների մոտ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Գործնական աշխատանքների իրականացումը խմբային եղանակով նպաստում է սովորողների կոլեկտիվ մտածողության զարգացմանը, սովորել սովորեցնելով կարողունակության ձևավորմանը: Գործնական աշխատանքի իրականացումը տեխնոլոգիայի դասաժամին սովորողների համար հնարավորություն է ստեղծում տեսական գիտելիքները համադրել գործնական կարողությունների հետ:

Ինքնուրույնությունը, որը սովորողը ստանում է գործնական աշխատանքի ժամանակ, նպաստում է վերջինիս աշխատունակության ու մոտիվացիայի բարձրացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

- 1.Ժ. Ավետիսյան, «Տեխնոլոգիա», ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Երևան,«Աստղիկ գրատուն», 2014թ.:
- 2.Ժամանակակից դիդակտիկայի սկզբունքները՝ ըստ Վ. Կ. Դյաչենկոյի, Կոլեկտիվ ուսուցման տարրերը, Հանրակրթության կազմակերպման հիմնահարցերը, մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար, Երևան, 2009 թ.,
http://www.noravank.am/upload/pdf/27_am.pdf:
- 3.Հովսեփյան Ս., Հարությունյան Ա., Աղաջանյան Մ., Վերոյան Լ.,«Տեխնոլոգիա», ք. Երևան, 2008 թ.:
- 4.Հովսեփյան Ս., Հարությունյան Ա., Աղաջանյան Մ., Վերոյան Լ.,«Տեխնոլոգիա» ուսուցչի ձեռնարկ, 1-7 դասարանների համար, ք. Երևան,2008 թ.:
- 5.Ս.Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերոյան,
- 6.«Տեխնոլոգիա» ուսուցչի ձեռնարկ, 1-7 դասարաններ, Երևան,«ՏիգրանՄեծ», 2014 թ.:
- 7.«Տեխնոլոգիա» առարկայի հանրակրթական դպրոցի չափ